ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- Ն-5480

«7» հուլիսի 2022թ.

«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Սույնով տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռախոսային սարքերի և լարերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2 կամ Հավելված N 1.3), 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Համակարգում Մասնակցի կողմից մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը: Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) կցված է մեկ այլ ընթացակարգին մասնակցելու դիմուն-հայտարարություն, ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ առաջարկվում է Ձեզ մինչև սույն թվականի հուլիսի 8-ը ներառյալ շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝**

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/34 ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-792, 511-788